ամենայն նման սոցայ, այսինքն ուրեմն թուղթ զանազան զօրութեամբ ձեռնադրեալք եթէ նամակ Օրհնութեան, եթէ պահպանութեան, եթէ հրովարտակ հրամանի և կամ շնորհաց և պաշտօնատարութեան և կամ հասարակ օրէն մէջ ժողովրդոց թուխթ պարտից և երաշխաւորութեան դաշանց և ստացմանց և այլն, նաև անուանք պալատից և խորհրդարանի և դատաստանի և բանտի և անունք իշխանաց և դաւառապետաց և նախարարաց, սպարապետաց, զօրագլխաց և կուսակալաց, նա՛ և անուանք զինուց և գործիք զինուորաց. սոքայ և այլ բազում նման սոցայ, որ կայ ըստ իւրաքանչիւր անուն 'ի վաղուց և հնոց 'ի Հայոց բառիս, որ այժմոյս 'ի անկարութենէ իմմէ յինէն անգիտելի է, իբր բոլորն անծանօթ, և թէպէտ գործն, որում ես առաջնամ ցուցանել ձեզ անուանեալ անունս իրաց, այլ զի արդ կարէ ցուցանել և ճառել մինչ ո՛չ ձայնեցի անուն գործոյն և չափն իրին և կշիռ բանին, և ես անծանօթ 'ի այսպիսի իրաց անուանց, այլ որպէս 'ի վերն ասացի, զի նախանձն իմ յիշեալով 'ի վերայ պակասութեան և անկարութեան իմոյ թոյլ ո՛չ տայ զիս զի 'ի պատճառէ 'ի վեր յիշեցեալ անկարգութեան իմոյ թողից բանս իմ կիսակատար, եթէ ո՛չ 'ի պատճառէ յատկապէս սիրոյ իմոյ ես առաջադրեցի 'ի միտս իմ, զի լաւ է ինձ անուանակոչել անունս նոր, և չափս նոր,